

---

---

## ՀՀ ԳԱՍ ՀՈՒՇԱՄԵՂԱԸ՝ ՀՈՎՀԱՆՆԵՄ ՉԵՔԻՉՑԱՆԻՆ

70 տարի առաջ Երևանում ծնունդ առավ հայ երաժշտական իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ՝ Հայաստանի պետական երգչախումբը, որի ստեղծումը հնարավոր դարձավ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, երբ թշվառությունը թոթափող մեր հայրենիքում պետության բարձր հովանավորությամբ սկսվեց մշակութային կյանքի աշխուժացման աննախադեպ ալիքը: Հայրենիքից հեռու ապրող ու արարող արվեստագետները վերադառնում են հայրենիք, և Երևանում սկսում են գործել կոնսերվատորիան, օպերայի և բալետի պետական թատրոնը:

1932-ին հիմնարկվում է Հայֆիլհարմոնիան<sup>1</sup>, որի կազմում Թ. Ալթունյանի ջանքերով 1937-ին հիմնադրվում է Հայաստանի պետական երգչախումբը: 1939-ին Մոսկվայում երգչախումբը հաջողությամբ մասնակցում է Հայկական արվեստի ու գրականության առաջին տասնօրյակին: Բայց Թ. Ալթունյանը, ընտրելով իր երկրորդ զավակին՝ 1938-ին ստեղծած Հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլը, շուտով հեռանում է երգչախմբից: Երգչախումբը ղեկավարելու նպատակով 1940-ին Լենինգրադից հրավիրվում է Ա. Տեր-Հովհաննիսյանը: Շուտով սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, երգիչները մեկնում են ռազմաճակատ, իսկ երգչախումբը լուծարվում է:

Երգչախմբի անհրաժեշտությունը վերստին կարևորվում է հետպատերազմյան առաջին տարիներին. 1947-ին ղեկավարի վահանակի մոտ նորից Թ. Ալթունյանն է: Այս անգամ երգչախումբն ավելի հզոր էր ու հնչեղ. ընդլայնվել էր կազմը, երկացանկում ներառվել էին համաշխարհային և ռուս երաժշտության կոթողներ, ժամանակակից հայ կոմպոզիտորների գործերը: 1949 թ. Թ. Ալթունյանը դարձյալ հեռանում է երգչախմբից: Իրար են հաջորդում Լ. Տումաշևը, Է. Ծատուրյանը, Ջ. Գյոզալյանը, Ա. Աբգարյանը:

1955-ին երգչախմբի ղեկավարությունը վերստին ստանձնում է Ա. Տեր-Հովհաննիսյանը. 1956-ին երգչախումբը Մոսկվայում կրկին մեծ հաջողությամբ մասնակցում է Հայկական արվեստի և գրականության տասնօրյակին, 1957 թ. խմբավար է նշանակվում Ն. Մնգրյանը:

Եվ ահավասիկ 1961 թ. սեպտեմբերի 5-ին տեղի է ունենում Հայաստանի պետական երգչախմբի ու Հովհաննես Չեքիջյանի բախտորոշ հանդիպումը՝ նշանավորելով կապելլայի պատմության ոսկեդարը: Իր 70-ամյա ճանապարհի 46 տարիները երգչախումբը քայլեց ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի հմուտ առաջնորդությամբ ու նրա ղեկավարությամբ էլ գրեց իր տարեգրության փառավոր էջերը, կատարողական բարձր արվեստի և ստեղծագործական ակնառու նվաճումների համար 1969 թ. ԽՍՀՄ Մշակույթի նախարար-

---

<sup>1</sup> Ազգային ու համաշխարհային դասական և ժամանակակից երաժշտական ստեղծագործությունն ու կատարողական արվեստը քարոզելու նպատակով 1930-ականի վերջին ստեղծվում են Հայֆիլհարմոնիայի կատարողական կոլեկտիվները՝ Հայաստանի պետական երգչախումբը, Հայկական ժողովրդական գործիքների նվագախումբը, Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը, Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը, Հայաստանի ջազ նվագախումբը, կոմիտասի անվան լարային քառյակը:

րության հրամանագրով արժանացավ «ակադեմիական» բարձր, սակավադեպ շնորհվող կոչմանը, 1975-ին դարձավ Հայաստանի վաստակավոր կուլեկտիվ:

Երգչախումբը հանդես է եկել հայ և համաշխարհային խմբերգային երաժշտության գոհարների բարձրարժեք կատարումներով, աշխարհի 178 քաղաքներում կայացած 813 համերգների ընթացքում նվաճել աշխարհահռչակ համերգասրահների նրբաճաշակ և խստապահանջ ունկնդիրների *bravo*-ներն ու *bis*-երը<sup>2</sup>: Կապելլան միակն է համաշխարհային խմբերգային արվեստում, որը բեմում չի օգտվում նոտաներից անգամ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարման ժամանակ՝ ղեկավարվելով «բեմ բարձրացողը նոտաներն իր սրտում ու մտքում պետք է ունենա և ոչ թե ձեռքին» չեքիջյանական նշանաբանով:

Իր հարուստ երկացանկում<sup>3</sup> ընդգրկված համաշխարհային, ռուս և հայ դասականների, ժամանակակից հեղինակների ավելի քան 700, այդ թվում՝ խոշոր կտավի շուրջ 40 ստեղծագործությունները (դրանցից 15-ը կատարվել են «ԽՍՀՄ-ում առաջին անգամ» խորագրով) երգչախումբը ներկայացնում է բնագրով՝ երգելով 27 լեզուներով: Կապելլայի համերգներին հիացական հողվածներով արձագանքեցին և նրա գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր Հ. Չեքիջյանի գործունեությունն ըստ արժանվույն գնահատեցին աշխարհի բազմաթիվ հեղինակավոր թերթեր ու հանդեսներ՝ *“Figaro”*, *“New York Times”*, *“The Boston Globe”*, *“Le monde”*, *“Paris match”*, *“Los Angeles Times”*, *“Le soir”*, *“La revue du Liban”*, *“Правда”*, *“Советская музыка”*, *“Музыкальная жизнь”*, *“Советская культура”*, *“Вечерний Ленинград”* և այլն:

70-ամյա փառահեղ ճանապարհ անցած և կատարելության հասած, իր գրեթե կեսդարյա անփոփոխ գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր, ամենայն հայոց Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի հմուտ առաջնորդությամբ շարունակելով կրել հայ դասական խմբերգային երաժշտության լավագույն թարգմանի դրոշը՝ երգչախումբն այսօր էլ հայ երգչախմբային արվեստի չգերազանցված գագաթն է, հայրենական երաժշտարվեստի փառքե-

<sup>2</sup> Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը համերգներով հանդես է եկել նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, Լիբանանում, Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Իսպանիայում, Եվրոպայում, Թուրքիայում: Ելույթներ է ունեցել Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի և Ս. Պետերբուրգի Շոստակովիչի անվան դահլիճներում, Մոսկվայի Մեծ թատրոնում, Փարիզի *Palais des Congrès* և *La salle Pleyel*, Լոնդոնի *Queen Elizabeth Hall* և *Westminster Methodist Center Hall*, Նյու-Յորքի *Every Fisher Hall*, Բոստոնի *Symphonic Hall*, Ֆիլադելֆիայի *Centennial Hall*, *Lnu Անջլինսի Scottish Ride Auditorium*, *Աթենքի Pallas*, *Պրագայի The Salle Smetana* սրահներում:

<sup>3</sup> Երգչախմբի երկացանկում ընդգրկված են Բախի, Վեդդերի, Մոցարտի, Բեթհովենի, Շոբերտի, Բելինիի, Ռոսինիի, Վերդիի, Վագների, Մենդելսոնի, Բրամսի, Բելոլիոզի, Գունյի, Ֆորելի, Սմետանայի, Գերշվինի, Գլինկայի, Բորդինի, Մուսորգսկու, Չայկովսկու, Տաննի, Կոմիտասի, Մ. Եվմալյանի, Բ. Կարա-Մուրզայի, Բ. Կանաչյանի, Տ. Չուխաճյանի, Ա. Տիգրանյանի, Ա. Սպենդիարյանի, Դ. Շոստակովիչի, Ա. Խաչատրյանի, Տ. Լյուրենսիկովի, Ա. Լուլմիևի, Գ. Սվիրիդովի, Դ. Կաբալևսկու, Ռ. Շեդրինի, Ա. Ալեքսանդրովի, Ա. Բաբաջանյանի, Ալ. Հարությունյանի, Օ. Թաթարիչվիլու, Է. Միրզայանի, Է. Հովհաննիսյանի, Գ. Հախինյանի, Ա. Հովհաննեսի, Ա. Պարթևյանի և այլոց ստեղծագործությունները:

րից մեկը:

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում 2007 թ. մայիսի 16-ին տեղի ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակին նվիրված Կառավարական հոբելյանական հանձնաժողովի կողմից հաստատված հոբելյանական միջոցառումների շարքի երկրորդ<sup>4</sup> հատվածը՝ կապելլայի պատմությանը նվիրված անդրանիկ գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը: Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը նշեց. «Կապելլայի տարեգրության Ոսկեդարը նշանավորվեց կոլեկտիվի ու Հովհաննես Չեքիջյանի արգասաբեր համագործակցությամբ, որը սկիզբ առավ 1961-ին և ահա շարունակվում է մինչև օրս՝ ավելի քան 46 տարի: Կոմիտասի և հայ դասական կոմպոզիտորների ստեղծագործությունների անգուցական կատարումներով, կապելլան հայ խմբերգային արվեստը մեծ հաջողությամբ ներկայացրեց Լիբանանում, Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիա յում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում... Աննախադեպ հարստացավ ու բազմակողմանի դարձավ երգչախմբի համերգային երկացանկը՝ ներառելով ավելի քան 700 ստեղծագործություն»:

Կապելլան անգերազանցելի բարձունքների հասցնելու և համաշխարհային ճանաչման արժանացնելու, մեծն Կոմիտասի գործը շարունակելով՝ հայ դասական խմբերգային երաժշտությունը ամբողջ աշխարհում քարոզելու համար ՀՀ ԳԱԱ նախագահը մատուցեց Հովհաննես Չեքիջյանին հանձնեց ՀՀ ԳԱԱ բարձրագույն պարգևը՝ «ՀՀ ԳԱԱ հուշամեդալը», որին արվեստի բնագավառի գործիչներից ՀՀ ԳԱԱ գոյության 64 տարվա ընթացքում արժանացել են ընդամենը երկուսը՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Ալեքսանդր Հարությունյանն ու Էդվարդ Միրզոյանը:

Հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանը «Հայ երգչախմբային արվեստում ունեցած ակնառու վաստակի համար, ինչպես նաև Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակի առթիվ» մատուցեց նախարարության «Ոսկե մեդալը»: Նախարարն իրավացիորեն նկատեց. «Ամեն ժողովուրդ, ամեն երկիր չէ, որ կապելլա ունի: Այս «Ոսկե մեդալում» խտացված է Ձեր հանդեպ ամբողջ հայ ժողովրդի երաժշտասեր հասարակայնության ունեցած վերաբերմունքը: Մեզ ճանաչել են Ձեր երգած երգերով»: Շնորհավորելով կրկնակի մեդալակիր մատուցողին՝ ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը, երգչախումբը համեմատելով Գիտությունների ակադեմիայի հետ, նշեց, որ Չեքիջյանը ղեկավարում է երգչախումբը արդեն 46 տարի. ճիշտ այդքան ղեկավարել է ակադեմիան Վիկտոր Համբարձումյանը: Հայկական ակադեմիայի համաշխարհային ճանաչումը կապված է Համբարձումյանի անվան հետ: Ճիշտ այդպես էլ կապելլայի համաշխարհային փառքը պայմանավորված է Չեքիջյանի գործունեությամբ, թեև

<sup>4</sup> 2007 թ. ապրիլի 19-ին «Ա. Խաչատրյան» մեծ համերգասրահում Ն. Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի կատարմամբ տեղի ունեցավ Ջ. Վերդիի՝ սակավ հնչող «Նաբուկո» օպերայի՝ Հայաստանում անդրանիկ համերգային փայլուն կատարումը: Հունիսի 2-ին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում երգչախումբը հանդես եկավ «Տոբոյ խմբերգային արվեստի գոհարներ» ծրագրով, իսկ հուլիսի 13-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոնում կայացավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի 70-ամյակին նվիրված հոբելյանական եզրափակիչ համերգը:

նրանից առաջ երգչախումբն ունեցել է շատ խմբավարներ. «Երբ կապելլան մեկնում է արտասահման, ես հպարտ եմ ու վստահ, որ նա կվերադառնա հաղթանակով: Շնորհակալություն մեզ վստահություն և հպարտություն ներշնչելու համար»:

Մաեստրոյին ՀՀ ԳԱԱ «Հուշամեդալ» ստանալու կապակցությամբ շնորհավորեցին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Դավիթ Մուրադյանը, հրապարակախոս Երվանդ Ազատյանը (Դետրոյտ), ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանը:

Գիտաժողովում «Հայ խմբերգային արվեստը և Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը» գեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության թեկնածու Աննա Ասատրյանը: Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը խոսեց կապելլայի անցած փառապանծ ուղու մասին, իսկ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանի բանախոսությունը երգչախմբի միջազգային ճանաչման մասին էր:

Վերջում երախտիքի խոսք ասաց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր Հ. Չեքիջյանը. «Պիտի միասին երգել սովորենք, պիտի հասկանանք միասին և ներդաշնակ երգելու խորհուրդը՝ իրար օգնելով և ոչ թե խանգարելով: Պետական ակադեմիական երգչախումբը սեփական օրինակով ցույց տվեց, որ մենք կարող ենք միավորվել, եթե շատ ցանկանանք. այդ դեպքում կստեղծենք ամենաբարձր որակը, ամենամեծ արժեքը»:

Հավարտ հոբելյանական միջոցառման ՀՀ ԳԱԱ նախագահության կամարների ներքո Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի անգուգական կատարմամբ առաջին անգամ հնչեց Մ. Եկմալյանի «Ով, հայոց աշխարհ» խմբերգը:

**ԱՄՍՏՐՅԱՆ Ա. Գ.**

Արվեստագիտության թեկնածու